Հ. ՔՈԼԱՏԱԿ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում այժմ կանգուն հուշարձաններ չեն մնացել. այն երկու խաչքարերը, որոնց արձանագրությունները մեջ են բերված՝ այժմ ընկած են գյուղամիջում։ Տեղացիների ասելով՝ դրանց մոտ եղել է մատուռ կամ փոքր եկեղեցի, որի մնացորդները հազիվ են նշմարվում։ Երրորդ խաչքարը գերեզմանատան մեջ չգտանք։

Այս գյուղը հնում, հավանաբար, մեծ է եղել և կարևոր դեր է խաղացել։ Այդ են վկայում նախ արձանագրությունները, ապա՝ գյուղի դիրքն ու միջավայրը։ Այն գտնվում է մի ինքնամփոփ ձորահովտի կենտրոնում, որի միջով հոսում է Քոլատակի ջուր կոչվող վտակը և խառնվում Խաչեն գետին։ Այդ ձորահովտի մեջ և նրան շրջապատող լեռնաշղթաների վրա են գտնվում Մեծիրանց վանքը, Կոշիկ անապատը, Հավապտուկ վանքը և Խոխոնաբերդը։ Ինչպես հայտնի է, այս միջավայրում են գտնվում Գոռշյանց տոհմի հնագույն հիշատակարանները, որոնք և մեծավաստակ հայագետ Գ. Հովսեփյանին հանգեցրել են այն եզրակացությանը, որ Գոռշյան կամ Խաղբակյան տոհմի նախնական բնակավայրը եղել է Քոլատակ գյուղը, Հավապտուկ վանքը նրանց տոհմական գերեզմանատունը և Գեոաքար գյուղը՝ նստոցը[1]։

Այս Գետահովիսն ավելի հին ժամանակ միջնամասն է եղել Արցախի Մեծիրանց գավառի՝ իր հեղինակավոր Մեծիրանց վանքով։ Այժմ այդ Գետահովտում գոյություն ունեցող գյուղերից ոչ մեկում կարևոր հուշարձաններ չկան, միայն Քոլատակն է, որ իր շրջապատում եղած և մեր թված հուշարձաններից բացի պահպանել է այն երեք խաչքարերը, որոնց արձանագրությունները մեջ են բերված և որոնց բովանդակությունը ինչ-որ չափով գյուղի նշանավոր լինելն է մատնանշում։

42. ԽԱՉՔԱՐ, ընկած է գյուղամիջում, թիկունքին 11 տող.



ԹԻԻՆ :ՈՀԹ: (1230) ԷՐ. ԵՍ| ՍԱՐԳԻՍ ԵԻ ԱՑԼ ԵՂԲԱՐՔՍ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ՋԽԱՉԵՐՍ| ՀԱՒՐ ՄԵՐ ԳՐԻԳՈՐԱՆԱ| ԵԻ ԵՂԲԱՒՐ ՄԵՐ ՇԱՀԱ|ԲԵՐԱ| ՈՐ ԿԻՍԱՒՐԵԱՑ| ԺԱՄԱՆԱ-ԿԱԻ ԽՈՂԽ|ՈՂԵՑԱԻ Ի ՁԵՌՆ ԱՑ|ԼԱՋԳԵԱՑ. ՈՐՔ ԵՐԿ|ՐՊԱԳԷՔ ՑԱՂԱՒԹՍ ՑԻՇԵՑԷՔ[1]:

Ծանոթ. *Խաչքարի վերին կեսն է մնացել. վերջին տողից միայն 8 գրի վերին մասը։*

Լուսանկ. 10

[1] Գարեգին արք. Հովսեփյան, *Խաղբակյանք կամ Գոռշյանք հայոց պատմության մեջ, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 34։*

43. ԽԱՉՔԱՐ, ընկած է գյուղամիջում. նախորդի մոտ. ստորին մասում 7 տող.

Ի Թ Ձ Ի
Ե ՍՍԵ Դ ԱՅԱՂ
ԱՂԻՆՔԻ Դ ՈՒՍՄՐԴԱ
ՍԱՆԱՅԿ ԱՆԳՆԵՑԻ ԶԻԶԼԱ
ՅՁԱ ՅԻՇԱՄԱԿԻՆՁԵՒ
ԶԱՒ ԱԿԱՅ ՈՐՔԿԱՐԴ ՅԱ
ՂԱՒԹ ՍՅԻՇԷՑԷՔ

Ի Թ. ՀՈՅՁԲ: (1233). ԵՍ ՍԵԴԱՑ Ա-
ՂՅԱՂԻՆ ՔԻ. ԴՈՒՍՏՐ ՀԱՍՍԱՆԱՑ
ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱ ՑՁԱ ՑԻՇԱՏԱԿ ԻՆՁ
ԵԿ. ԶԱՒԱԿԱՑ. ՈՐՔ ԿԱՐԴԱՑԷ, ՑԱՂ-
ՂԱՒԹԱ ՑԻՇԷՑԷՔ:

Ծանոթ. *Թվականի մեջ հարյուրավորը բաց է թողնված։ Լրացնում ենք նկատի ունենալով խաչքարի քանդակների և գրչությանոճը, նաև պատմական միջավայրը։*

Այս երկու հուշարձանները ընկած են գյուղամիջում. փողոցի կողքին, սրանց մոտ կա ավերակից գոյացած մի թումբ, որտեղ գյուղացիների ասելով եղել է մատուռ։

Լուսանկ. 11

44. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը եղել է գյուղի ղերեզմանատան մեջ.

Ի :ՈՂԲ: (1243) Թուին. ողորմութեամբն Աստուծոյ և տ:ուանց խաչեանոյ՝ Ջալալին և որդոյ իւրոյ Աբաբակին, ես տ:ր Վարդան Վարդապետ Հռոմասարեցի, պարոնայքն հողն ինձ տուին, ես գնեցի զբոլին հանդն, զ Շեղջատափն, երկրին տնատեղն՝ տուի վասն նոգոյ իմոյ վախմ ի սբ. ուխտիս Գանձասարայ. սոխս տուին տարէն :Բ: ժամ ի տանն Վարդանանց. ով զնայրենիքս հանէ ի սբ ուխտէս :ՅԺԸ: (318) հայրապետաց նզոված լիցի և իմ մեղացն պարտական.

Ծանոթ. *Այս հուշարձանը մենք չենք տեսել։*

Հրատ. *Շահխաթունեանց, II, 377 (որից և առնում ենք), Բարխուդարեանց, 169,*

3. ԿՈՇԻԿ ԱՆԱՊԱՏ

Գտնվում է Քոլատակ գյուղից 10—12 կմ հարավ-արևմուտք, բարձր լեռների վրա, շրջապատված խիտ անտառով։

Անապատը բաղկացած է երկու խումբ շենքերից, որոնք բռնված են մի բաց տարածությամբ, որը նախկինում ծառալել է որպես բակ։

Առաջին խումբը կազմված է իրար կից երեք փոքր եկեղեցիներից և սրանց արևմուտքում գտնվող սրահից, որի երեք կամարակապ աչքերն այժմ փակ են։ Այս որահի հյուսիսից էլ կցված է նեղ ու երկար շենք, որի պատերի կեսն է այժմ կանգուն։ Եկեղեցիներից մեծ է հարավայինը, որի թաղակապ ծածկն ամբողջովին թափված է, մյուսները նույնպես թաղակապ են, բայց պահպանված են ամբողջությամբ։

Երկրորդ խումբը գտնվում է սրանցից հարավ-արևելք. բաղկացած է իրար մեջ բացվող երկու սենյականման շենքերից. կանգուն է։

Անապատի բոլոր շինությունները կառուցված են ճեղքած քարերով. սրբատաշ է միայն մեծ եկեղեցու բեմի ճակատը, որի վրա գրված է №58 արձանագրությունը։

Առաջին խմբի հուշարձանների արևմտյան կողմում նկատվում են խուցերի և տնտեսական շենքերի կիսավեր պատերը՝ ծածկված թփուտներով և ծառերով, այստեղ պատերին հենած և ընկած վիճակում կան մի քանի խաչքարեր, որոնցից մի քանիսի ստորին մասերում քանդակված են հեծյալներ՝ զինված տեգերով և կապարճներով։ Հետաքրքիր է մարդկանց ռազմական հանդերձանքը և մանավանդ ձիերի վեհ տեսքը՝ հանգուցավոր ագիներով։

Հուշարձաններից հյուսիս եղել է վանական գերեզմանատունը, որն ավերել են մեծամեծ ծառերի արմատները։ Անապատ տանող ճանապարհին հանդիպում են գերեզմանաքարեր և խաչքարեր, որոնք ուղղահան են արված։

Այս հուշարձաններից ժողովածուն ամփոփում է 25 արձանագրություն, որոնցից 15-ը հրատարակվում են առաջին անգամ։